Հասցեատեր՝

«Ալաշկերտ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcalashkert.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27.09.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	ՊԼ-031
Խախտում՝	1. «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ -ի պաշտոնատար անձ Բագրատ Նավոյանի կողմից մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություն և հայհոյանք հնչեցնելը (Հավելված 1 Ա, 32-րդ կետ) 2. Ակումբի կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտի գովազդային կողավահանների ոչ պատշաճ տեղադրում և ՀՖՖ Մարքեթինգի բաժնի կողմից նախապես հաստատված շարվածքը չապահովելը (Հավելված 1 Ա, 42-րդ կետ) 3. Խաղի ժամանակահատվածում միայն անչափահաս կարգադրիչների և մեկ ոստիկանի ներկայությունը(Հավելված 1 Ա, 34-րդ կետ)
Առաջնություն՝	IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝	«Ալաշկերտ» - «Ուրարտու» (4:2), 15.09.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 2-րդ հոդվածի 1 կետով, 4-րդ հոդվածի 1.5 ենթակետով և Հավելված 1 Ա, 32-րդ կետով՝ մրցավարների հասցեին վիրավորական արտահայտություն և հայհոյանք հնչեցնելու համար «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի պաշտոնատար անձ Բագրատ Նավոյանին զրկել իր ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից սեպտեմբերի 15-ից սկսած 10 օրով, «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500,000 ՀՀ դրամի չափով:
2. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետով՝ ակումբի կողմից խաղի ժամանակահատվածում խաղադաշտի գովազդային կողավահանների ոչ պատշաճ տեղադրման և ՀՖՖ Մարքեթինգի բաժնի կողմից նախապես հաստատված շարվածքը չապահովելու համար պատասխանատվության միջոց չկիրառել:
3. Խաղի ժամանակահատվածում միայն անչափահաս կարգադրիչների և մեկ ոստիկանի ներկայության համար «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- Եթե ֆուտբոլային սուբյեկտի կողմից պատասխանատվության միջոցի պայմանական կիրառման ընթացքում թույլ է տրվում համանման կարգապահական խախտում, ապա ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշմամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառվում է: Միևնույն ժամանակ այդ կարգապահական միջոցը գումարվում է նոր կատարված կարգապահական խախտման հետևանքով կիրառվող միջոցին:
- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն

Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:

- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: